ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 օգոստոսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

108
(2958)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՒ Է Տ. ՀԵՔԵՔՅԱՆՆ ԱԶԱՏՎԵԼ ՊԱՇՏՈՆԻՑ

Երեւանի քաղաքապետի՝ օգոստոսի 14-ի որոշմամբ Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Տիգրան Հեքեքյանն ազատվել է պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պատճառը Հեքեքյանի դիրքորոշումներն ու քայլերն են Նիկոլ Փաշինյանի իշխանության դեմ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի արդեն նախկին տնօրեն Տիգրան Հեքեքյանն ասաց. «Ովքեր ինձ ճանաչում են՝ գիտեն, որ ես այդքան արագ եւ հեշտ չեմ հանձնվում»:

Հեքեքյանը հստակ չնշեց իր ազատման պատճառները՝ ասելով, որ դրանք շատ են եւ տարբեր:

«Ես շարունակելու եմ իմ գործունեությունը, ես աշխատելու եմ Հայաստանի փոքրիկ երգիչների հետ», - նշեց նա:

Տիգրան Հեքեքյանը նաեւ հավելեց, որ աշխատանքից դուրս է եկել իր իսկ դիմումի համաձայն: Նախապես դիմում է գրել, որ իր աշխատանքային վերջին օրը լինի օգոստոսի 14-ը: Հարցին՝ իր անձի նկատմամբ ճնշումներ եղե՞լ են, թե՞ ոչ՝ ասաց, որ իր հանդեպ շատ են ճնշումները, բայց դրանք չեն կարող ստիպել իրեն անել այն, ինչ որ չի ցանկանում:

Ներկայումս Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանը պաշտոնին նշանակվել է 2018 թվականի սեպտեմբերի 13-ից, սակայն նա իր գործունեությունը սկսել է 2009 թվականից: Արմեն Կոտոլյանը մինչեւ 2011 թվականը եղել է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ում՝ որպես առաջատար ինժեներ, այնուհետեւ՝ 2011-ից մինչեւ 2014 թվականները, եղել է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ի՝ անալիզի մոնիթորինգի բաժնի ծրագրային ադմինիստրատոր, դրանից հետո՝ 2014-2016 թվականներին, զբաղեցրել է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ի «1Ս» ծրագրի ներդրման սպասարկման բաժնի պետի պաշտոնը: Կոտոլյանը անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 23-ին, որից տեղեկանում ենք, որ նա հաշվետու տարվա սկզբում հայտարարագրել է երկու հողամաս, որոնք գտնվում են Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում, դրանք ձեռք են բերվել նույն օրը՝ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին՝ գնման եղանակով: Երկու հողամասերն էլ տարվա վերջում պահպանվել են: Նա տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Հաշվետու տարվա սկզբում Արմեն Կոտոլյանը հայտարարագրել է երկու հանձնված-վերադարձված փոխառություններ, որոնցից մեկը տարվա սկզբում եղել է 9 մլն 720 հազար դրամ, իսկ մյուսը՝ 3 մլն 770 հազար դրամ, տարվա ընթացքում հանձնված մեկ փոխառությունը զրոյացվել է, իսկ մյուսը դարձել է 17 մլն 808 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Աթենք» ընկերությունը, թեեւ խոստացել էր լուծել քաղաքացու խնդիրը՝ ապագայում նոր գործարան կառուցել, սակայն տեսանելի ոչինչ չի անում այդ ուղղությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը օգոստոսի 13-ին գրել էր, որ «Աթենք» ՍՊԸ-ն դատարանում պարտվել է ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնին: Պաշտոնական աղբյուրներից՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր, որ քաղաքացի Ալինա Խուդոյանը բողոք է ներկայացրել այն մասին, որ Երեւան քաղաքի Ծարավ Աղբյուր թաղամասի 59/1 հասցեում գործող «Աթենք» մսամթերքի գործարանի սարքավորումների աշխատանքի հետեւանքով առաջացող աղմուկը թափանցում է բնակարան եւ խանգարում իր ընտանիքի գիշերային անդորրը: Իրականացված զննության արդյունքում պարզվել է, որ «Աթենքի» գործունեության հետեւանքով իրապես կարող է դիմումատուի բնակարանում աղմուկ լինել. դա հաստատվել է նաեւ պաշտոնական չափման արդյունքում: ՀՀ առողջապահական աշխատանքի տեսչական մարմինը որոշել է «Աթենք» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Արտյոմ Մարտիրոսյանի, կարգադրել 15-օրյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ապահովելով սանիտարական նորմերով սահմանված պահանջները: Սակայն «Աթենք» ՍՊԸ-ն համամիտ չի եղել տեսչական մարմնի որոշման հետ եւ բողոքարկել է ակտը դատարանում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ տեւական ժամանակ ընթացող դատական պրոցեսների արդյունքում «Աթենք» ՍՊ ընկերությունը պարտվել է դատարանում: Մենք փորձեցինք կապ հաստատել «Աթենք» ՍՊԸ-ի հետ, սակայն մեր բոլոր հեռախոսազանգերը մնացին անպատասխան:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Կուսակցության խորհրդանիշն է ձեռքսեղմում: Ձեռքսեղմման պատկերի ուրվագիծը նմանվում է Արարատ լեռան ուրվագծին»,- սա հատված է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կանոնադրությունից, որտեղ Նիկոլ Փաշինյանն ու իր երիտթիմակիցները նկարագրում են ՔՊԿ խորհրդանիշը: Կանոնադրության հաստատումից տարիներ անց Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Արարատ լեռը մերը չէ, մեր խորհրդանիշը որեւէ դեպքում չի կարող դառնալ, եւ որ ՀՀ ամենաբարձր գագաթը Արագած լեռն է: Այլ կերպ ասած՝ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները Արցախը բարեհաջող կերպով հանձնել են, ԱԳ փոշեծծիչի վարկը մարել են եւ «ապագաները ապահովել»: Հիմա թերեւս մի փոքրիկ հարց է մնացել ՔՊ-ի համար՝ Արարատ լեռը՝ որպես խորհրդանիշ, պետռեգիստրով հանել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կանոնադրությունից եւ ապրել գոհ ու երջանիկ:

ԶՐՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆԻ ՍԽԱԼ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքային ոլանավորող Վիկտոր Մնացականյանի հետ:

Դեռ ամիսներ առաջ, երբ երեւանյան փողոցներում կային հին եւ հաստաբուն ծառեր, Մնացականյանը բացատրել էր, թե ինչ վնասներ կարող է հասցվել, եթե դրանք փոխարինվեն ավելի երիտասարդ ծառերով:

Վիկտոր Մնացականյանը նաեւ անդրադարձավ մի քանի այլ քաղաքային խնդիրների, ինչպիսիք են երեւանյան մայթեզրերը, հետիոտների համար նախատեսված անցումները, արտաքին գովազդները:

Հավելենք նաեւ, որ Վիկտոր Մնացականյանն իր խոսքում նշեց, որ ամենակարեւորն է նախապատմությունը տալ հետիոտնին, քանի որ մայթեզրերը նույնպես խնդիրներ են ներկայացնում:

Մասնավորապես՝ ստորեւ:

-Քրեական օրենսգրքում եւ տարբեր նորմատիվ ակտերում մենք ունենք ծառերի էտման վերաբերյալ հստակ կանոններ, որոնց հետեւելով է միայն օրինական ծառերի էտումը կամ փոխարինումը, իսկ այն, ինչ արվեց քաղաքապետարանի կողմից, ոչ թե «ծառերի փոխարինում» էր, այլ բարբարոսություն: Տարիներ առաջ մենք իրականացրինք ծառերի էտում, Աբովյան փողոցում հատկապես բողոքներ հնչեցին դրա վերաբերյալ, բայց մենք ստիպված էինք անել այդ գործողությունը, քանի որ մոտավորապես 8 տարի, թեպետ գումարներ էին դուրս գրվել, սակայն այդ ծառերը չէին էտվել: Նշեմ, որ բավականին բարդ մասնագիտություն է ծառերի էտումը. այն կոչվում է արբորիստիկա, Երեւանի կանաչապատման ՀՈԱԿ-ում չկա գեթ մեկ լիցենզավորված արբորիստ, այսինքն՝ ծառը կարող է էտել հող հնձող մասնագետը, մի բանվոր, որի ֆիզիկական տվյալները համապատասխանում են այդ գործին, սողցավարները, այսինքն՝ դրանով չի զբաղվում մասնագետը: Այս բարձիթողի վերաբերմունքի պատճառով մենք կորցրինք բազմաթիվ թեղիներ, իսկ տվյալ հարցերով զբաղվելու փոխարեն քաղաքապետարանը նոր մեքենաներ գնելով էր զբաղված: Հուդայածառը վատ ծառ չէ, սակայն պարտեզային ծառ է. նրանք ի սկզբանե սխալ մոտեցան ծառերի տնկման հարցին: Կտորի մեջ փաթաթված բերեցին այն, ինչը անթույլատրելի է, գազոնների տեղադրումը նույնպես ոչ գրագետ կերպով է արվել: Կեսօրին՝ ժամը հատկապես 2-ին, 3-ին, որեւէ զով, ստվերային տեղ հնարավոր չէ գտնել քաղաքում, դա նույնպես ծառերի սխալ տնկման հետեւանք է, քանի որ նախկինում ստվերը շուրջ 70 տոկոսով ծածկում էր մայթեզրը, իսկ այժմ հազիվ 4 տոկոս է փակվում ծառերի միջոցով:

Քաղաքը անտեսված է նաեւ շենքերի բակերի, դրանց հարակից տարածքների խնամքով զբաղվելու տեսանկյունից, Երեւանի գեղեցկությունը կորչում է փողոցների տարբեր անկյուններում դրված սարքավորումների, գովազդային պաստառների պատճառով: Միայն ծաատունկերով չէ, որ քաղաքը իր գեղեցկությունը կվերագտնի: Քաղաքի տեսքն աղճատում են տգեղ գովազդային վահանակները, որոնք փակում են հին Երեւանի գեղեցիկ շենքերը, ինչպես «Մոսկվա» կինոթատրոնի շենքը կամ Կարապի լճի հարակից տարածքները, մեծ խնդիրներ են նաեւ պատմական շենքերի վրա դրված վահանակները, արեւային պանելները: Ամեն խաչմերուկում ագրեսիվ գույներով գումարային սարքավորումները... եւ, ըստ իս ամենակարեւորը՝ մենք հարգանք չունենք մեր մայթեզրերի հանդեպ: Այս պահին, որպես քաղաքային կարեւոր էլեմենտ, մայթերն են. դրանք Երեւանի ամենակաւերոր կոսմետիկ տարրերն են, որոնք անտեսված են:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ

ՊՈՒՏԻՆԻ ԱՅՑԸ՝ ԲԱՔՈՒ

Ինչպես հայտնի է՝ օգոստոսի 18-ին մեկնարկել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի երկօրյա այցը Բաքու:

Ի սկզբանե այցը հայտարարվել է որպես պաշտոնական՝ աշխատանքային այց, սակայն ավելի ուշ նշվեց, որ այցի ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ի պատիվ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի պետական ընդունելություն կկազմակերպի «Գյուլիստան» պալատում:

Երկու երկրներն էլ պետական մակարդակով նշել են, որ այցելությունը նպատակ ունի քննարկել երկու պետությունների հարաբերություններն ու համագործակցությունը, ինչպես նաեւ իրավիճակը տարածաշրջանում:

Թե՛ Կրեմլը, թե՛ ՌԴ-ում Ադրբեջանի դեսպանը նշել են, որ այցի առանցքային հարցերից մեկը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումն է՝ խաղաղության պայմանագրի կնքման, սահմանազատման եւ սահմանագծման, ինչպես նաեւ լոգիստիկ ուղիների կարգավորման հիմնահարցերը:

Պուտինին Բաքվի օդանավակայանում դիմավորեցին Ադրբեջանի առաջին փոխվարչապետ Յաղուբ Էուբովը եւ Մոսկվայում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլողլուն: Ավելի ուշ՝ պետական դիմավորման արարողությունից հետո, Պուտինն ընթրել է Ադրբեջանի նախագահի եւ առաջին տիկնոջ հետ:

Հանդիպումից հետո Ռուսաստանի Դաշնության նախագահն ասել է, որ իրենց խոսակցության մասին կտեղեկացնի ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Ինչ կարելի է սպասել այս հանդիպումից: Ավելի քան ակնհայտ է, որ տարածաշրջանի գերտերություն հանդիսացող Ռուսաստանի Դաշնությունը շարունակում է ամրապնդել իր դիրքերը, եւ այն աշխարհաքաղաքական իրավիճակում, որում այսօր գտնվում է տարածաշրջանը, թուրքական գործոնը ծանրակշիռ ազդեցություն ունի, որի հետ պետք է հաշվի նստել:

Իսկ ի՞նչ է անում այդ ընթացքում ՀՀ իշխանությունը... Երկրի առաջին դեմքը հեծանիվ է քշում:

ՀՈՒՐԻ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բաքվում հայտարարել են, որ Հայաստանի հետ բանակցային գործընթացի համար Ադրբեջանը բաց է, իսկ Ռուսաստանը՝ նման բանակցությունների համար, միշտ էլ ընդունելի հարթակ է եղել:

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը «Իզվեստիա»-ին տված հարցազրույցում հայտարարել է, թե Բաքուն բաց է «բանակցային գործընթացի համար: «Այդ նպատակով մենք օգտագործում ենք ուղիղ երկկողմ ձեւաչափ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ: Միաժամանակ երբեք չենք հրաժարվել տարբեր հարթակներից: Ռուսաստանի Դաշնության հարթակը մեզ համար միշտ ընդունելի է եղել»:

Միժամանակ, ադրբեջանցի նախարարը Երեւանի նկատմամբ հետագա պահանջներ է հնչեցրել:

Ըստ նրա՝ «Ադրբեջանն նպատակաուղղված է կարգավորել Հայաստանի հետ հարաբերությունները, սակայն Երեւանի բոլոր «անհիմն պահանջները» պետք է վերացվեն ոչ թե խոսքերով, այլ «իրավական հիմնավորված ձեւով»:

«Ադրբեջանական կողմի դիրքորոշումն այն է, որ մենք նպատակաուղղված ենք Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների կարգավորմանը, բայց մենք լիովին հավատարիմ ենք այն գծին, որ բոլոր այն անհիմն պահանջները, բոլոր այն անհիմն դիրքորոշումները, որոնք Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է տասնամյակներ շարունակ, պետք է ամբողջությամբ վերացվեն: Եվ դա չպետք է տեղի ունենա հայտարարությունների եւ հռչակագրերի մակարդակով, այլ պետք է արտացոլվի իրավական հիմնավորված ձեւով»,- ասել է Բայրամովը:

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված խաղաղության պայմանագիրը պետք է վերացնի ապագայում երկրների միջեւ տարածքային խնդրին վերադառնալու բոլոր հնարավոր ռիսկերը», - ասել է Ադրբեջանի արտգործնախարարը:

«ԱՆՀԻՄՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ». ԲԱՅՐԱՄՈՎ

Բաքուն նպատակաուղղված է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը:

«Ադրբեջանը նպատակաուղղված է ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը, սակայն հայկական կողմի անհիմն պահանջները պետք է վերացվեն ոչ թե հայտարարությունների մակարդակով, այլ իրավաբանորեն», - ասել է նա:

ԻՐԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Իրանի եւ Հայաստանի հարաբերությունները բարեկամական եւ կառուցողական են: Անդրադառնալով հայ-իրանական հարաբերություններին՝ ասել է Իրանի ԱԳՆ խոսնակ Նասեր Քանանին:

«Իրանը եւ Հայաստանն ունեն ընդհանուր կամք՝ զարգացնելու համակողմանի հարաբերություններ: Այս երկու երկրները կարեւորում են տարածաշրջանում եւ սահմաններում կայունության եւ անվտանգության հաստատումը»,-ասել է նա:

Հարցին, թե ինչպես է Իրանը վերաբերվում ԱՄՆ-ի կողմից Հայաստանին զենքի վաճառքին՝ Քանանին նշել է, որ որեւէ փաստական տեղեկություն չունի այդ մասին եւ հրապարակված լուրերի հիման վրա չի կարող մեկնաբանել:

ԱՐՑԱԽԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեկ տարի առաջ այս օրերին Արցախում հումանիտար ճգնաժամը հատեց եզրագիծը: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Ծայրահեղ ծանր իրավիճակ էր ոչ միայն մարդկանց առօրյա կյանքում, այլ պաշտպանության բանակում, որտեղ մատակարարումները խիստ խափանումներով էին, իսկ առանձին հրամանատարներ դիրքերում գտնվող զինծառայողների օրվա սնունդը հայթայթում էին մերձակա գյուղերից:

Բանակում ծրագրված պլանները 5-10%-ի չափով էին իրականացվում՝ մարտական պատրաստությունից մինչեւ սովորական կենցաղի ապահովում:

Այս ամենից ուղիղ մեկ ամիս անց, երբ ողջ Արցախն ու հատկապես երկրի պաշտպանության համար պատասխանատու կառույցներն ու ստորաբաժանումներն ամբողջությամբ հյուծվեցին, Ադրբեջանն անցավ ռազմական գործողությունների:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարիչն այդ օրերին ֆիզիկապես հեծանվավազքով չէր զբաղված, սակայն պետության իրադրային արձագանքն առանձնապես չէր տարբերվում այսօր դրսեւորած վարքագծից:

ՀՀ իշխանական վերնախավն ընդհանուր գծերով գիտեր, թե ինչ է սպասվում Արցախին, սակայն ոչ միայն տեղից չշարժվեց, այլ Ադրբեջանին ազդանշաններ արձակեց առ այն, որ մտադիր չէ որեւէ ձեւով արձագանքելու Արցախի նկատմամբ գործողություններին», - գրել է նա:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«2015 թվականի միջուկային համաձայնագրի բոլոր կողմերը՝ ներառյալ հենց ամերիկացիները, ցանկանում են, որ համաձայնագիրը պատասխանատու կերպով վերադարձվի», ըստ իրանական Mehr գործակալության հայտարարել է Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին:

«Հուսով ենք՝ նոր կառավարության օրոք Իրանի ժողովրդի իրավունքները կիրացվեն ըստ նախկինում ստորագրված համաձայնագրի»,- հավելել է դիվանագետը:

Գործողությունների համատեղ համապարփակ ծրագիրը ստորագրվել է 2015 թվականին Իրանի, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների եւ Գերմանիայի միջեւ:

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը 2018 թվականին դուրս եկավ գործարքից, մինչդեռ ԱՄՆ ներկայիս նախագահ Ջո Բայդենն ազդարարեց, որ բաց է համաձայնագիրը երկարաձգելու համար:

Գործարքը վերականգնելու համար Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Չինաստանը, ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան Իրանի հետ 2021 թվականի ապրիլից բանակցություններ են վարում:

ՍՏԱՆՁՆԵԼ ԵՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պաղեստինյան ՀԱՄԱՍ եւ «Իսլամական ջիհադ» խմբավորումները ստանձնել են Թել Ավիվում իրականացված ահաբեկչության պատասխանատվությունը եւ սպառնացել նոր գրոհներ նախապատրաստել: Այդ հայտարարությունը հրապարակվել է ՀԱՄԱՍ-ի պաշտոնական Telegram ալիքում:

Արմատականները հայտարարել են, որ այսուհետ կանոնավոր կերպով մահապարտ ահաբեկիչների մասնակցությամբ ահաբեկչություններ կկազմակերպեն Իսրայելի տարածքում «մինչեւ օկուպանտները չդադարեցնեն իրենց ագրեսիան քաղաքացիական բնակչության դեմ», ինչպես նաեւ, մինչեւ հրեական պետությունը «չդադարի պաղեստինցիներին փորձել վտարել իրենց տարածքներից»:

Ջինյալներն Իսրայելի տարածքում ակտիվ ահաբեկչական գործողությունների վերսկսման եւս մեկ նախադրյալ են անվանել Իսրայելի իշխանությունների կողմից անցկացվող «մահափորձերի քաղաքականությունը» արմատական շարժումների պարագլուխների նկատմամբ:

Օգոստոսի 19-ին Իսրայելի ոստիկանությունը հաստատել է, որ օգոստոսի 18-ին Թել Ավիվում տեղի ունեցած պայթյունն ահաբեկչություն էր, եւ միջադեպի հետեւանքով զոհվել է ահաբեկիչն ինքը՝ Հորդանան գետի արեւմտյան ափի Նաբլուս քաղաքի բնակիչը: Ռադիո Kan-ի տվյալներով՝ արմատականը մի քանի տասնյակ կիլոգրամ կշռող հզոր պայթուցիկ սարքը կրում էր մեծ ուսապարկի մեջ: Հնարավոր է՝նա պլանավորել էր գնալ սինագոգ կամ առեւտրի կենտրոն: Պայթյունի հետեւանքով վնասվածքներ է ստացել Թել Ավիվի մի բնակիչ, որը տուն գնալու ճանապարհին էլեկտրահեծանվով անցնում էր այդ շրջանով:

ԽԱՅՏԱՌԱԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՈՎ ԴԱՐՁԱՎ ՀՀԽ ԱՆԴԱՄ

Վերջին շրջանում Հայաստանի հանրային ռադիոյի նախկին տնօրեն Գարեգին Խումարյանն իր տված տասնյակ հարցազրույցներում շարունակ պնդում էր, որ ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդը չպետք է ինքն ընտրի հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի գործադիր տնօրեններին, այլ պետք է վերականգնի անկախ մրցութային հանձնաժողովների պրակտիկան: Հիմնական պատճառաբանությունն այն է, որ այս խորհուրդն իր որոշումներում ազատ չէ, նրա անդամներից շատերն այս կամ այն կերպ փոխկապակցված են իշխող կուսակցության հետ, եւ խորհուրդը կատարում է «վերեւից» իջեցված հրահանգները: Դե իսկ մրցութային հանձնաժողովն անկախ է եւ կկայացնի զուտ մասնագիտական որոշում տնօրենների ընտրության հարցում:

Օգոստոսի 16-ին Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցութային ժամանակավոր հանձնաժողովն ապացուցեց, որ պարոն Խումարյանը սխալվում էր: Ոչ մի հանձնաժողով անկախ չէ իր որոշումներում: Գոնե այն դեպքերում, երբ խոսքը հանրային հեռարձակողների ղեկավարների կամ խորհրդի կազմի մասին է:

Այս մրցույթին մասնակցում էին 7 թեկնածու (օրենքի պահանջի համաձայն՝ բոլորը կանայք էին): Մրցույթում հաղթեց ոմն Իրինա Շահնազարյան, ով գիտաշխատող է մի մասնավոր գիտահետազոտական ինստիտուտում: Այնպիսի տպավորություն է, որ հանձնաժողովն առաջադրված թեկնածուներից ընտրել է նրան, ով ամենահեռուն է լրատվությունից, հեռարձակումից, հեռուստատեսությունից եւ ռադիոյից: Ըստ ՀՀ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի (Խորհրդի իրավասությունները) 1-ին կետի, հանրային հեռարձակողի խորհուրդը, հետեւաբար նրա անդամներն ունեն 19 իրավասություն (ենթակետ): Ընտրված թեկնածուն ակնհայտորեն այս ենթակետերից որեւէ մեկում իրավասու չէ:

Իր աշխատանքային գործունեության ողջ կարճատեւ ընթացքում Շահնազարյանը երբեւէ չի առնչվել ո՛չ հեռուստատեսության, ո՛չ էլ ռադիոյի հետ: Գուցե նա անկրկնելի է «Ստալինյան մշակութային հեղափոխությունը 1920-ականների երկրորդ կեսին» իր հետազոտությունում, սակայն ո՞վ կարող է ասել, թե դա ինչ կապ ունի հանրային հեռարձակման հետ: Ի՞նչ հիմունքներով է նա վաղը որոշելու հանրային հեռարձակողների լրատվական, մշակութային, մանկական, երաժշտական քաղաքականությունը:

Ի դեպ (N 1), տեղին է նշել, որ «անկախ» մրցութային հանձնաժողովի նախագահ, «Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ. Մատենադարան» հիմնադրամի տնօրեն Արա Խզմալյանն ուղղակիորեն կապակցված է այն ինստիտուտի հետ, որտեղ աշխատում է Շահնազարյանը՝ լինելով նաեւ ինստիտուտի խորհրդի կազմում: «Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի» ինտերնետային կայքի «գործընկերներ» էջում նշված է «Մատենադարանը», իսկ «ընկերներ» էջում՝ Արա Խզմալյանը: Անկախության ահա այսպիսի դրսեւորում:

Իհարկե, միամտություն կլինի պնդել, որ պարոն Խզմալյանը հանձնաժողովի անդամների վրա ճնշում է գործադրել՝ պարտադրելով ընտրել նրան: Ակնհայտորեն պարտադրանքը եկել է այլ աշխատավայրերից: Սակայն, գոնե արտաքին պատշաճությունը կարելի էր պահպանել:

Ի դեպ N 2: «Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի» համահիմնադիր Վարդան Ազատյանը (Շահնազարյանի նախկին գործընկերն ու ղեկավարը) 2024 թվականի մայիսից Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորն է: Մրցութային հանձնաժողովի անդամ Սառա Նալբանդյանը՝ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտորը: Քույր (կամ էլ եղբայր) բուհերի այս երկու ռեկտորներն անկասկած ունեն շփման եւ հետաքրքրությունների եզրեր: Սակայն, իհարկե, սա էլ անտեսենք:

Ի դեպ N 3: ՀՀ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 25-րդ հոդվածի (Խորհրդի անդամների նշանակման կարգը եւ լիազորությունների դադարումը) 18-րդ կետում գրված է. «Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել հեռարձակման ոլորտի մասնագետներ»: Իհարկե, օրենքը սա չի պարտադրում. այն ասում է՝«կարող են»: Հաշվի առնելով, որ հանձնաժողովը ոչ միայն ժամանակավոր է, այլեւ ազատ, անկախ եւ պրոֆեսիոնալ, նրա նախագահը, հիշեցնենք՝թեկնածուի աշխատավայրի «գործընկերն» ու «ընկերը», բնականաբար նպատակահարմար չի գտել նիստերին հրավիրել հեռարձակման ոլորտի որեւէ մասնագետի: Պարզ է, չէ՞, որ հանձնաժողովականներն իրենց ընտրությունը կատարել են՝ հաշվի առնելով թեկնածուների բացառապես մասնագիտական կարողությունները այդ նույն հեռարձակման ոլորտում: Պարզ է, չէ՞, որ նրանք հատկապես այս թեկնածուին ընտրել են խղճի մտոք եւ առաջնորդվել են միայն ու միայն նրա պրոֆեսիոնալ գործունեությամբ, հարուստ կյանքի փորձով, եւ «ստալինյան մշակութային հեղափոխության» վերլուծությամբ:

Ի դեպ N 4: Թե՛ այս եւ թե՛ հանրային ռադիոյի տնօրենի ընտրություններն ունեին ընդհանուր սցենար, երկու դեպքում էլ թեկնածուն ընտրվում է միանգամից եւ միաձայն՝ մեկ ձայնի բացառությամբ: Ռադիոյի պարագայում 6 անդամներից 5-ը կատարեցին «ազատ եւ անկախ» ընտրություն, այս դեպքում՝ 5-ից 4-ը:

Իրականում ամեն ինչ փայլուն է եւ տրամաբանական: Հանրային հեռարձակողի խորհրդի անդամները գտան իրենց արժանի գործընկեր. նույնքան սկզբունքային, նույնքան անկախ եւ նույնքան պրոֆեսիոնալ. երբ նրանք միաձայն (-1) քվեարկում էին, պետք է գիտակցեին, որ այդ ուղղը, նույնքան միաձայն, (-1) իրենց դռանն էլ է չոքելու:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՐՈՂ Է ՀԱՄՆԵԼ ՄԱԿՐՈՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻՆ

Ժան-Լյուկ Մելանշոնի գլխավորած ֆրանսիական ձախակողմյան կուսակցությունը կփորձի օգտագործել խորհրդարանական քվեարկությունը՝ հասնելու նախագահ Էմանուել Մակրոնի հրաժարականին, եթե նա չառաջարկի վարչապետի պաշտոնը Լյուսի Կաստեին, ասվում է կուսակցության հայտարարության մեջ.

Հուլիսի սկզբին ձախակողմյան «Նոր ժողովրդական ճակատ» դաշինքը, որը ստացել է Ֆրանսիայի խորհրդարանում տեղերի հարաբերական մեծամասնությունը, համաձայնության է եկել վարչապետի թեկնածուի շուրջ՝առաջադրելով Փարիզի ֆինանսական դեպարտամենտի ղեկավար Լյուսի Կաստեին:

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Կորեայի Հանրապետության նախագահ Յուն Սոկ Յոլը կոչ է արել բարձրացնել պատրաստությունը՝ հետ մղելու ԿԺԴՀ-ի սադրանքները «գորշ գոտում», եւ պատրաստ լինել հիբրիդային պատերազմի Հյուսիսային Կորեայի դեմ: Այս մասին հաղորդում է Yonhap գործակալությունը:

Հարավային Կորեայի նախագահը նախազգուշացրել է, որ Հյուսիսային Կորեան կարող է փորձել բռնության եւ քարոզչության միջոցով սոցիալական անկայունություն ստեղծել հակամարտության վաղ փուլերում:

«Մենք պետք է ակտիվորեն մեթոդներ փնտրենք պառակտումը կանխելու եւ դիմակայության նկատմամբ մարդկանց վճռականությունը բարձրացնելու համար»,- հայտարարել է նա:

Օգոստոսի 19-ին երկրում սկսվել են Հարավային Կորեայի եւ ԱՄՆ-ի ամենամյա Ulchi Freedom Shield զորավարժությունները, որոնք տեւելու են մինչեւ օգոստոսի 29-ը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ԵՐԿՈՒ ԱՆՁ ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

2024 թվականի օգոստոսի 15-ին Տավուշի մարզի Բերդ համայնքի Վարագավան բնակավայրի վարչական ղեկավարից ստացված հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 297-րդ հոդվածի 3-րդ մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների, ինչպես նաեւ ՆԳՆ ոստիկանության ծառայողների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում ղարզվել են նշված բնակավայրում կատարված զինված խուլիգանության եւ բռնությունների դեմքի քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, միջադեպին մասնակից անձանց ինքնությունը, ովքեր նույն համայնքի բնակիչներ են: Վարույթի շրջանակում վարչական ղեկավարը տուժող է ճանաչվել եւ ցուցմունք տվել դեպքի հանգամանքի շուրջ:

Քննությամբ պարզվել է, որ Վարագավան գյուղի 28-ամյա եւ Բերդ քաղաքի 27-ամյա բնակիչները, ովքեր, քննության տվյալներով, բարեկամական կապեր ունեն, փորձել են ուժի գործադրման սպառնալիքով լուծում տալ Վարագավան բնակավայրում բնակվող իրենց մեկ այլ բարեկամի խնդիրներին եւ այդ նպատակով այցելել են բնակավայրի վարչական ղեկավարի գրասենյակ, հանդիպել նրա հետ:

Վարչական շենքում տեղի ունեցած հանդիպումը վերածվել է վիճաբանության եւ կռվի, որից հետո Վարագավան գյուղի 28-ամյա բնակիչը դիմել է փախուստի: Վարչական ղեկավարն իր ավտոմեքենայով հետապնդել է վերջինիս, որի ընթացքում Իջեւան-Բերդ հանրապետական նշանակության ավտոճանապարհին 56-ամյա տղամարդը, ով հանդիսանում է 27-ամյա երիտասարդի հորեղբայրը, ինչպես նաեւ նույն բնակավայրի 37-ամյա բնակիչը, վերջինիս կողմից վարվող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով, փակել են վարչական ղեկավարի ավտոմեքենայի ճանապարհը՝ այդպիսով փակելով նաեւ վերոգրյալ ճանապարհով երթեւեկությունը:

Այնուհետեւ, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, հաշվի չառնելով, որ գտնվում են հանրապետական նշանակության ավտոճանապարհին եւ իրենց գործողություններով խոչընդոտում են երթեւեկությունը եւ անհանգստություն պատճառում ճանապարհով երթեւեկող, ինչպես նաեւ դեպքի վայրում հավաքված անձանց, նշված անձինք սկսել են հայհոյանքներ եւ սպանության սպառնալիքներ հնչեցնել վարչական ղեկավարի հասցեին եւ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, հարվածներ հասցրել նրան: Տեսնելով, որ ֆիզիկական ուժի գործադրմամբ չեն կարողանում ցանկալի մարմնական վնասվածքներ պատճառել նրան, 56-ամյա տղամարդը «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայից վերցրել է իր կողմից ապօրինի եղանակով ձեռք բերված, վիճաբանության ընթացքում վարչական ղեկավարին մարմնական վնասվածք պատճառելու նպատակով դեպքի վայր տեղափոխված հրազենը, փորձել է լիցքավորել, սակայն վերջինիս հաջողվել է խլել այն, որը հետագայում վարչական ղեկավարի կողմից ներկայացվել է իրավապահներին:

Այնուհետեւ, ցանկանալով ամեն կերպ հասնել իր նպատակին՝ 56-ամյա տղամարդը փորձել է վարչական ղեկավարին վնասվածքներ հասցնել դանակով՝ այդ ընթացքում շարունակելով հայհոյել, սպանության սպառնալիքներ հնչեցնել, որի արդյունքում խաթարվել է հասարակական կարգը եւ խոչընդոտվել է հանրապետական նշանակության ավտոճանապարհի երթեւեկությունը:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեպքի օրը՝ ժամը 22:45-ին, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն բնակավայրում պետական սահմանը հատելու պահին 56-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Վերջինիս ձերբակալելու որոշում է կայացվել:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Ավելի ուշ՝ օգոստոսի 16-ին, հանցանք կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել է նաեւ Բերդ համայնքի 37-ամյա բնակիչը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ՄՈՐԸ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շարունակվում է օրեր առաջ Երեւանի Բագրատունյաց փողոցի բնակարաններից մեկում 65-ամյա կնոջ սպանության դեմքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ դեպքը տեղի է ունեցել սույն թվականի օգոստոսի 15-ին: Դեպքի վայր մեկնած քննչական-օպերատիվ խումբը բնակարանում հայտնաբերել էր 65-ամյա կնոջ դի՝ սուր կտրած-ծակած բազմաթիվ վնասվածքներով:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում սպանության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն, հարցաքննվել են բազմաթիվ անձինք, այդ թվում՝ հարեւանները, տուժողի ազգականները: Նաեւ՝ առգրավվել եւ զննվել է շենքի մուտքը տեսանկարահանող սարքի հիշողության կրիչը: Ձեռնարկված քննչական եւ ապացուցողական գործողությունների, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների կողմից կատարված օպերատիվ-հետախուզական արդյունավետ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ տուժողին կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ հասցրել է վերջինիս 25-ամյա որդին: Մասնավորապես՝ 2024 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, մորը՝ Գ. Կարապետյանին ապօրինի կյանքից զրկելու նպատակով, վերջինս գնացել է իր եւ ընտանիքի բնակության՝ Երեւան քաղաքի Բագրատունյաց փողոցում գտնվող շենքի մոտ, որտեղ տեղանքն ուսումնասիրելով եւ իր կողմից պլանավորված հանցավոր արարքը կատարելու համար նպաստավոր պահ ընտրելով՝ բարձրացել է բնակարան: Այնտեղ, իր մորն ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս մարմնի տարբեր հատվածներին, կտրել նրա պարանոցը, որից հետո հանցագործության գործիք դանակը թողել է բնակարանի միջանցքում գտնվող պահարանի վրա եւ ժամը 09:40-ի սահմաններում դեպքի վայրից դիմել փախուստի: Դեպքի հաջորդ օրը վերջինս ոստիկանության ծառայողների կողմից հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 25-ամյա երիտասարդի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ նրան մեղադրանք է ներկայացվել:

Վարույթն իրականացնող քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ 25-ամյա երիտասարդի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Միջոցներ են ձեռնարկվում դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու, այդ թվում՝ մեղադրյալի հոգեկան առողջության հետ կապված առկա տվյալներն ստուգելու ուղղությամբ, որի նպատակով իրավասու հաստատություններից պահանջվել են համապատասխան տվյալներ եւ բժշկական փաստաթղթեր:

ԼՈՒՐԵՐ

14-ԱՄՅԱ ԵՐԵԽԱՅԻ ԵՆ ԱՌԵՎԱՆԳԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օոստոսի 18-ին իրավապահները տեղեկություններ են ստացել, որ Էջմիածնում երեք երիտասարդ անձինք 14 ամյա երեխայի են առեւանգել եւ տարել են գերեզմանատուն, որից հետո զանգահարել են հարազատներին ու հայհոյանք հնչեցրել:

Ավելի ուշ իրավապահների կողմից իրականացված ստուգումներով պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 19:00-ին, Մուսալեռ գյուղի տան բակերից մեկից 28-ամյա, 21-ամյա եւ 25-ամյա երիտասարդներն առեւանգել են Ա. Ս.-ի որդուն՝ Ս.Ս.-ին, նստեցրել են «Մերսեդես» մեքենան եւ տարել Մուսալեռ գյուղի գերեզմանատուն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ առեւանգողները պնդում են, որ Ս.Ս.-ն գողացել է իրենց պատկանող «Այֆոն» մոդելի հեռախոսը, ու դա է դրդել նրանց գնալ այդ քայլին: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահներն առեւանգողների մի մասին փնտրում են:

15-ԱՄՅԱ ՏՂԱ Է ԴԱՆԱԿԱՀԱՐՎԵԼ

Արաբկիր վարչական շրջանում 15 տարեկան տղայի են դանակահարել: Պարզվել է, որ 52-ամյա Ս. Խ.-ն հանդիպել է Սունդուկյան փ. 2 հասցեի մոտ եւ իր որդու ոտքի մոտ թքելու համար դիտողություն արած Տ. Օ.-ից պարզաբանումներ է պահանջել, որից հետո բռունցքով հարվածել է: 15-ամյա երեխան ձախ կողմից զգացել է ծակոց եւ Ս.Խ.-ի ձեռքին նկատել դանակ:

Իրավապահները քայլեր են ձեռնարկում Ս. Խ.-ին հայտնաբերելու ուղղությամբ:

18-ԱՄՅԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄՈՏ ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՆԳՆ ոստիկանության ՊԾ Երեւանի գնդի 4-րդ գումարտակի ծառայողները օգոստոսի 17-ին՝ ժամը 23:55-ին, Վազգեն Սարգսյան փողոցում ստուգման նպատակով կանգնեցրել են «Մերսեդես» մակնիշի մի մեքենա: Ուղեւորներից մեկը դրսեւորել է կասկածելի վարքագիծ, ապա պարեկների հարցին ի պատասխան՝ հայտնել է, որ մոտը թմրամիջոց կա: Վարորդը եւ երկու ուղեւորները, մեքենայով հանդերձ, տեղափոխվել են ոստիկանության Կենտրոնական բաժին:

Անձնական խուզարկությամբ 18-ամյա ուղեւորի մոտ հայտնաբերվել են մոխրացված հետքերով կաթուցիչ եւ մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող դեղնականաչավուն զանգված:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 16-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 235 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉ ԵՂԱՎ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

2020 թվականի հոկտեմբերի 29-ին Նիկոլ Փաշինյանը Հայաստանի 7 մարզերում նախկին զինվորականներին նշանակեց մարզպետի տեղակալներ: Որպես այդ որոշման նպատակ հայտարարվեց մարզերում աշխարհազորի ստեղծումը: Տավուշի մարզպետի տեղակալ նշանակվեց Արթուր Հովակիմյանը, ով երկար տարիներ Իջեւանի զինվորական կոմիսարն էր: Արթուր Հովակիմյանի՝ մարզպետ տեղակալ նշանակվելուց հետո Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը հայտարարեց. «Պատերազմին զուգահեռ Հայաստանում աշխարհազորային հաղթական ծրագրի հիմքն է դրվում»: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հետեւյալ հարցումն ենք ուղարկել. «Տավուշի մարզպետի տեղակալներից ո՞վ, ո՞ր ոլորտի խնդիրներով է զբաղվում, որո՞նք են նրանցից յուրաքանչյուրի աշխատանքային ոլորտները եւ պարտականությունները»: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը համակարգում է միջազգային եւ հասարակական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները, իսկ Արթուր Հովակիմյանը համակարգում է զորահավաքի, զորակոչի կազմակերպման աշխատանքները եւ ուժային կառույցների հետ փոխհարաբերությունները»: Բա ի՞նչ եղավ մարզում աշխարհազորի ստեղծման ղեկավարումը: Ադրբեջանի սահմանը պաշտպանող, 15 օր սահմանային դիրքերում ծառայություն իրականացնող աշխարհազորայինների աշխատավարձերը վերջերս կրճատել են՝ 180 հազարից դարձրել են 120 հազար դրամ: Տավուշի մարզի բնակիչ շատ աշխարահազորայիններ այդ պատճառով դուրս են եկել ծառայությունից:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ՝ ԲԱՂԱՆԻՍԻՑ

Սահմանազատման, իրականում՝ միակողմանի կերպով Ադրբեջանին տարածքներ հանձնելու հետեւանքով տարածքային կորուստներ ենք ունենալու ոչ միայն Իջեւան համայնքի Կիրանց գյուղից, այլ նաեւ Նոյեմբերյան համայնքի Բաղանիս գյուղից: Նախկինում ադրբեջանաբնակ, ԽՍՀՄ-ի ժամանակ՝ Ղազախի շրջանին պատկանող Բաղանիս-Այրում գյուղի տարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո նոր առաջացած սահմանին փշալար է փռվել, սակայն այդ փշալարը հիմնական չէ, ժամանակավոր է, առաջիկայում Կիրանցի նման այդտեղ էլ հիմնական փշալար է անցկացվելու, որից հետո խնդիր է ծագելու՝ դեպի հայկական սահմանապահ դիրքեր տանող ճանապարհ բացելու: Բաղանիս գյուղից հայտնեցին, որ այդ ճանապարհը այժմ բացվում է համայնքի պահեստային հողերից Բաղանիսի բնակիչ Արարատ Հարությունյանին երկարաժամկետ վարձակալությամբ տրված տարածքով: Խորհրդային շրջանում այդ տարածքում Բաղանիսի «սովխոզին» պատկանող թռչնաբուծական տնտեսություն էր գործում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎՏԱՆԳ՝ ՄԱՐԴԿԵՐՈՒՄ

ԱՆՏՈՒՆ ՇՆԵՐԸ ՈՀՄԱԿՆԵՐՈՎ ԵՆ ՇՐՋՈՒՄ

Օգոստոսին նշվում է անտուն կենդանիների պաշտպանության միջազգային օրը:

Այն սահմանվել է Կենդանիների պաշտպանության միջազգային կազմակերպության կողմից 1992 թվականին, երբ առաջարկված նախագիծը ստացել է աշխարհի կենդանապաշտպան կազմակերպությունների աջակցությունը: Որոշվել է, որ օգոստոս ամսի ամեն երրորդ շաբաթը նվիրված է լինելու անտուն կենդանիներին, սակայն այս օրը նշվում է ոչ թե որպես տոն, այլ որպես տվյալ խնդրի մասին ավելի բարձր խոսելու հնարավորություն:

ArmLur.am-ը կապ է հաստատել «Դինգո թիմ» հասարակական կազմակերպության հինադիր-նախագահ Օվսաննա Հովսեփյանի հետ՝ պարզելու՝ ինչ է արվում Հայաստանում անտուն կենդանիների համար, քանի որ դրանց քանակը փողոցներում ավելանում է:

«Ընդհանուր առմամբ անտուն կենդանիների հարցում մենք ունենք շատ-շատ մեծ բացեր, քանի որ չունենք օրենսդրություն, որով ամբողջ հանրապետությունում ամբողջ հարցը կկարգավորվի: Մենք անդադար խոսում ենք թափառող կենդանիների մասին, բայց չենք խոսում, թե որտեղից են այդ թափառող կենդանիները առաջանում, որովհետեւ, եթե մենք այսօր բոլոր թափառող կենդանիներին վերացնենք՝ տնային, ինչպես նաեւ լքված շների սերունդները շատ արագ լրացնելու են այդ քանակը: Այսինքն՝ մենք առաջին հերթին խնդիր ունենք կարգավորելու տերերով կենդանիների բազմացումը, որովհետեւ թափառողներն առաջանում են տեր ունեցող կենդանիներից»,- այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց «Դինգո թիմ» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ Օվսաննա Հովսեփյանը:

Վերջինս մեզ հետ զրույցում նշեց, որ կենդանիներին լքելը օրենքով պետք է կարգավորվի, որ կենդանին չհայտնվի դրսում, դրսում չբազմանա եւ այդպիսով քանակը չշատանա, իսկ հետո կարելի է խոսել թափառող կենդանիների հարցից:

«Երկրորդ կարեւոր խնդիրը թափառող կենդանիների մասին, որն էլի օրենքով չի կարգավորվում, ամբողջ պետությունով՝ մարզերով, գյուղերով, քաղաքներով պետք է կատարվի մեծաքանակ ստերջացման ծրագիր: Նման ծրագիր գործում է միայն Երեւանում, այդ պատճառով էլ Երեւանում համեմատաբար ստաբիլ վիճակ է: Շների մեծ մասը կլիպսով է, որն էլ նշանակում է, որ արդեն տարիների ընթացքում թափառող շների քանակը նվազման է գնալու: Իսկ մարզերում այլ պատկեր է, այնտեղ օրենքով ոչինչ չի նախատեսվում, չնայած նրան, որ սպանդն արգելվում է, բայց նաեւ ոչինչ չի պարտադրվում համայնքներին, համայնքներն էլ ոչինչ չեն անում եւ կենդանիներն էլ շատանում են: Մարզերում, բնականաբար, ստերջացում չեն ապահովում, ոհմակներ են կազմվում եւ առաջացնում են բազմաթիվ խնդիրներ: Պետք է լինի մեկ ընդհանուր համալիր օրենք, որով կկարգավորվի բոլոր կետերը»,- ասաց Օվսաննա Հովսեփյանը:

Օվսաննա Հովսեփյանից նաեւ հետաքրքրվեցինք՝ ըստ իրեն, ինչո՞ւ Հայաստանում նման օրենք չի գործում թափառող կենդանիների վերաբերյալ:

Օվսաննա Հովսեփյանը պատասխանեց՝ ավարտին հասցնելով խոսակցությունը. «Ես կարծում եմ, որ այդ հարցը պարզապես այդքան էլ կարեւոր չեն համարում, թե չէ օրենքի նախագիծը եղել է, գրեթե պատրաստ էր: Լենա Նազարյանի եւ Մերի Գալստյանի նախաձեռնած օրենքի նախագիծն էր դա, որի մշակմանը նաեւ «Դինգո թիմն» է մասնակցել: Ես գիտեմ, որ այդ նախագիծը ամբողջությամբ պատրաստ էր, սակայն մինչեւ օրս չի մտնում օրակարգ եւ մղված է հետին պլան»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՋԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես՝ Արտակ Գագիկի Հարությունյանս, անհայտ պայմաններում կորցրել եմ ինձ տրամադրված՝ ՀՀ դատախազության N 024 կնիքը: Կնիքի կորստյան փաստը հայտնաբերել եմ 2024 թվականի հուլիսի սկզբին: Գտնողներին խնդրում եմ զանգահարել +374 51 1521 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Եսայի Կարապետի Բաբելյանս, անհայտ պայմաններում կորցրել եմ ինձ տրամադրված՝ ՀՀ դատախազության N 208 կնիքը: Կնիքի կորստյան փաստը հայտնաբերել եմ 2024 թվականի հուլիսի սկզբին: Գտնողներին խնդրում եմ զանգահարել +374 51 16 80 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Ես՝ Հռիփսիմե Մելիքի Տոնոյանս, 2024 թվականի ապրիլ ամսին, ինձ անհայտ պայմաններում, կորցրել եմ թիվ AD 032012 համարի դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել (098)13-08-86 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

Ես Արսեն Գալստյանս, անհայտ պայմաններում կորցրել եմ ինձ պատկանող անիվավոր տրակտորի պետհամարանիշը (0541UP) խնդրում եմ գտնողին զանգահարել 093 03 16 91 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (5)

2024 թ.-ի օգոստոսի 29-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով: Թիվ 49 լոտ՝ ոսկյա ջարդոն 26.1 գր. ընդհանուր քաշով, որից 11.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 11.4 գր.) 585 հարգի՝ 202.000 ՀՀ դրամ, 9.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 9.4 գր.) 500 հարգի՝ 140.400 ՀՀ դրամ, 5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 145.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 487.700 ՀՀ դրամ: Թիվ 50 լոտ՝ ոսկյա ջարդոն 21.9 գր. ընդհանուր քաշով, որից 0.3 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 500 հարգի՝ 4.480 ՀՀ դրամ, 14.7 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 14 գր.) 585 հարգի՝ 248.000 ՀՀ դրամ, 6.9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 200.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 452.980 ՀՀ դրամ: Թիվ 51 լոտ՝ ոսկյա զարդ 5.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 88.600 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Հեռ. +374 43 00 42 27:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 35 պատահար. 5 մարդ մահացել է, 50-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 05 սեպտեմբերի 2024 թվականին, ժամը 12:00- ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. Լոտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, գյուղ Բերդավան, 41-րդ փողոց, 10 հասցեում գտնվող 207,88 քմ արհեստանոց եւ 0,14734 հա հողամաս, Լոտի մեկնարկային գինը՝8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, Այրում ք., Անդրանիկի փողոց, 15 հասցեում գտնվող 316,92 քմ բնակելի տուն, 24,47 քմ անասնաշենք եւ 0,14 հա հողամաս, Լոտի մեկնարկային գինը՝ 37000000 (երեսունյոթ միլիոն) ՀՀ դրամ:

3. Լոտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, Այրում ք., Ջ. Անդրանիկի փողոց, 17 հասցեում գտնվող 168,77 քմ բնակելի տուն, 38,36 քմ ավտոտնակ, 2,83/6,79 խմ/ պարիսպ, 9,74 քմ /23,38 խմ/ պարիսպ եւ

0,11232 հա հողամաս, Լոտի մեկնարկային գինը՝ 34000000 (երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ:

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am , www.borsa.am

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱ

ԳՆԱՃԻ ԱՐԱԳԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔ

2024 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի ֆոնդային շուկան դրսեւորել է խառը դինամիկա: ACBA Bank-ի բաժնետոմսերը փոքր-ինչ աճել են՝ 2,7%-ով հասնելով հունիսի կեսերից ի վեր իրենց ամենաբարձր ցուցանիշին, այն բանից հետո, երբ ապրիլի վերջից (փակվել է օգոստոսի 9-ին) նվազել է գրեթե 8,0%-ով: Պոտենցիալ դրական նորությունների թվում կարելի է առանձնացնել վերջին վիճակագրությունը, որը վկայում է հունիսին Հայաստանի Հանրապետությունում առեւտրային բանկերի վարկավորման ծավալի թույլ, բայց աճի մասին (1,4% տարեկան): Մյուս կողմից, ՀՀ Կենտրոնական բանկի հուլիսի վերջին վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազումը եւ առեւտրային բանկերի ավանդների 1,1% տարեկան նվազման վիճակագրությունը պետք է փոխհատուցեն դրական ֆոնը:

Ինչպես նշում է Հայաստանի ֆոնդային բորսան. «Մեր կարծիքով՝ այս շարժումն ավելի շատ կապված է կապի ոլորտից ֆինանսական հատված միջոցների հոսքի հետ, հավանաբար, մոտ ապագայում առաջինի աճի կատալիզատորների բացակայության ֆոնին:

Հունիսի վիճակագրությունը ցույց է տվել, որ կապի ոլորտում եկամուտների աճը կազմել է ընդամենը 1% տարեկան: Այսպիսով՝ Telecom Armenia-ի բաժնետոմսերը 2024 թվականին առաջին անգամ իջել են (4,6%-ով) մեկ բաժնետոմսի դիմաց 200 դրամ աջակցության կարեւոր մակարդակից, ինչը թղթի վրա հետագա ճնշման ռիսկեր է խոստանում:

● Եռամյա կորպորատիվ պարտատոմսերի գների ինդեքսը մնում է հետեւողականորեն բարձր եւ չի փոխվել դիտարկվող ժամանակահատվածում: Կայուն է եղել նաեւ հայկական դրամի փոխարժեքը: Կարգավորող մարմնի կողմից դրամավարկային քաղաքականության մեղմացման պահպանողական մոտեցման ֆոնին դրա ազդեցությունը եկամտաբերության եւ պարտատոմսերի գների, ինչպես նաեւ արտարժույթի շուկայում առաջարկի եւ պահանջարկի հավասարակշռության վրա չնչին է եղել: Մյուս կողմից, հուլիսին հանրապետությունում գնաճի արագացման վիճակագրությունը շուկայի համար անակնկալ չէր, թեեւ դրանք սպասվածից մի փոքր բարձր էին եւ հավանաբար արդեն արտացոլված էին ֆինանսական գործիքների/պարտատոմսերի գներում: Մենք տարվա ընթացքում ակնկալում ենք Կենտրոնական բանկի տոկոսադրույքի եւս երկու անգամ իջեցում՝ ապահովելու համար գնաճը մոտենալ նպատակային մակարդակին:

2024 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է մի շարք կարեւոր տվյալներ: Հուլիսին երկրում գնաճը սպասվածից փոքր-ինչ ավելի է արագացել: Թեեւ տարեսկզբից յոթ ամիս անց երկրում պահպանվել է գնանկում, ինչը, մեր կարծիքով, կարող է կարգավորողին մղել այս տարի տոկոսադրույքների եւս երկու անգամ իջեցման:

Վիճակագրությունը վկայում է արտաքին առեւտրի բացասական հաշվեկշռի ավելի մեծ աճի մասին: Եվ եթե այս միտումը շարունակվի, ապա դա ԿԲ փոխարժեքի իջեցման հետ մեկտեղ կարող է հանգեցնել երկրում դրամի փոխարժեքի վրա որոշակի ճնշման:

● Հայաստանում գնաճը (ՍԳԻ) տարեկան կտրվածքով հասել է 1.4%-ի

● Բացասական զուտ արտահանումը հունիսին աճել է 24,8%-ով եւ կազմել 252 մլն ԱՄՆ դոլար:

Արտահանումը հունիսին տարեկան կտրվածքով աճել է 59.9%-ով, սակայն ամսական 10.9%-ով ցածր է:

Ներմուծման աճը տարեկան կտրվածքով կազմել է 20,6%:

● Պղնձի խտանյութի արտադրությունը Հայաստանում 2024 թվականի առաջին կիսամյակում աճել է 15%- ով եւ կազմել 144,6 հազար տոննա: Միաժամանակ, ցինկի եւ մոլիբդենի արտադրությունը նույնպես տարեկան կտրվածքով աճել է 20,8%-ով եւ 25,2%-ով՝ համապատասխանաբար մինչեւ 5,39 հազար տոննա եւ 7,92 հազար տոննա: Ընդհանուր առմամբ, արտադրության աճի տեմպերն արդեն պետք է արտացոլվեն արժույթի կատարողականում եւ, հավանաբար, նպաստեն դրա ամրապնդմանը առաջին կիսամյակում: Սակայն այժմ հիմնական մետաղների տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ կազմում է ընդամենը մոտ 2%, իսկ փոխարժեքի վրա ավելի մեծ ազդեցություն ունի թանկարժեք մետաղների եւ ոսկերչական իրերի արտադրությունը (վերամշակումը) եւ արտահանումը»:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Վարսենիկ Եփրեմի Ղազարյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Արաքս, գյուղ Առատաշեն, Կոմիտասի փողոց, 22 հասցեում գտնվող 64,5 քմ բնակելի տուն, 41,3 քմ մառան եւ 0,141 հա հողամաս:

Լոտի մեկնարկային գինը՝11500000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.09.2024թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am , www.borsa.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝«դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք, 3 շենք, 21 հասցեում գտնվող 83,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝29490000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փողոց, 5 շենք, 223 հասցեում գտնվող 87,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝36020000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.09.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 10.10.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԳՈՐԾԵՆ

ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԴՆՈՒՄ

Ծաղկաձորում մեկնարկել է «Հանրակրթության ոլորտի բարեփոխումները» խորագրով աշխատանքային երկօրյա խորհրդակցությունը, որը վարել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

Խորհրդակցությանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարության, ՀՀ մարզպետարանների, Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունների ղեկավարները, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչները:

Քննարկումը կազմակերպվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ՝ ԵՄ ֆինանսական աջակցությամբ:

Բացման խոսքում նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ աշխատաժողովի նպատակն է ամփոփել ուսումնական տարվան ընդառաջ իրականացված աշխատանքները. «Կարեւոր է եւս մեկ անգամ խոսել առաջնային անելիքների մասին՝ շեշտադրելով դրանք, որպեսզի մեր գործընկերները՝ թե՛ մարզային վարչություններից, թե՛ Երեւանի քաղաքապետարանից, պլանավորեն իրենց համապատասխան անելիքներն՝ ուսումնական տարվան ընդառաջ»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Անդրադառնալով հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրմանը՝ նա նշել է, որ աշխատանքներն այս տարի եւս շարունակվում են. 2024/25 ուսումնական տարում ՀՊՉ-ն ներդրվելու է 3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ դասարաններում: Չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ փոխնախարարը, մասնավորապես, ընդգծել է դասագրքերի ապահովման հարցը. «Դասագրքերը փորձաքննություն անցել են, երաշխավորվել եւ տպագրվել են:

Որոշ դասագրքերի տպագրումը դեռեւս ընթացքի մեջ է, որովհետեւ դրանք ավելի ուշ երաշխավորվեցին՝ լրամշակման կարիքով պայմանավորված: Նախատեսվում է, որ մինչեւ սեպտեմբերի մեկը դասագրքերը կբաշխվեն դպրոցներին»:

Նրա խոսքով՝ փոքր թվով առարկաների դասագրքեր չկան, որոնցից առանցքային է 10-րդ դասարանի հայոց պատմության դասագիրքը, որի համար ներկայացված հայտը չի երաշխավորվել. «Բայց այդ մասով ծրագրեր են արվում. առանձին ուսումնական նյութեր են մշակվում, կիրականացվեն վերապատրաստումներ, ուսուցիչները կստանան ուսումնական նյութեր»:

Ըստ նրա՝ որոշ դասարաններում, մասնավորապես՝ «Ֆրանսերեն», «Ռուսերեն», «Թվային գրագիտության եւ համակարգչային գիտություններ» առարկաների նոր դասագրքեր չկան, որովհետեւ դրանց համար կամ հայտեր չեն ներկայացվել կամ ներկայացված հայտերը չեն հաղթահարել դասագրքերի ստեղծման համար սահմանված պահանջները: Այս առարկաների համար այս տարի դպրոցներում կկիրառվեն նախկինում գործող դասագրքերը, սակայն այդ դասագրքերի համար նոր մրցույթներն արդեն իսկ հայտարարված են, եւ հաջորդ տարվա սկզբին կամփոփվեն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈԱ ՖԱ-Ն ԵՐԿԱՐԱՁԳԵԼ Է ՊԱՅՄԱԳԻՐԸ

Սերգեյ Մուրադյանը երկարաձգել է «Նոայի» հետ պայմանագիրը մինչեւ 2027 թվականը Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Սերգեյ Մուրադյանն ու «Նոան» շարունակում են համագործակցությունը: Հայ ֆուտբոլիստի հետ կնքվել է երեք տարվա պայմանագիր:

«Շատ ուրախ եմ «Նոայի» հետ շարունակել իմ ճանապարհը: Հպարտ եմ ներկայացնել հայկական «Նոա» ակումբն ու Հայաստանի հավաքականը միջազգային ասպարեզում»,-նշել է Մուրադյանը:

19-ամյա Մուրադյանը Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» սան է, մեր թիմի կազմը համալրել է նախորդ տարվա փետրվարին: Նա ելույթ է ունենում ազգային հավաքականում, ինչպես նաեւ խաղացել է Հայաստանի տարբեր տարիքային հավաքականներում:

«Նոայի» կազմում Մուրադյանն անցկացրել է 45 հանդիպում:

ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՉԵՄՊԻՈՆ

Ալեքս Սահակյանը դարձել է Եվրոպայի մինչեւ 18 տարեկան պատանիների արագ շախմատի չեմպիոն: Այս մասին հայտնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Ալեքսը ամբողջ առաջնության ընթացքում մնաց անպարտելի՝ 9 հնարավորից վաստակելով 7.5 միավոր:

«ՓՅՈՒՆԻԿ»-Ը ՓԼԵՅ-ՕՖՖՈՒՄ Է

Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երրորդ փուլի պատասխան խաղում «Փյունիկ»-ը Երեւանում հյուրընկալեց ղազախական «Օրդաբասի»-ին:

Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում կայացած խաղի մեկնարկում, թիմերը փոխանակվում էին գրոհներով եւ «Փյունիկ»-ի գրոհներն առավել վտանգավոր էին: Առաջին կեսում այդպես էլ դարպասի գրավում չարձանագրվեց: Թիմերն ընդմիջման գնացին զրոյական ոչոքի հաշվով:

Երկրորդ կեսում «Փյունիկ»-ն առավել մեծ ուժերով էր գրոհում: Եվ, ի վերջո, Եղիշե Մելիքյանի գլխավորած թիմն օգտագործեց իր հնարավորությունը: 66-րդ րոպեին գոլի հեղինակ դարձավ Օտուբանջոն:

«Փյունիկ»- «Օրդաբասի»՝ 1:0: Թիմերի առաջին խաղում էլ «Փյունիկ»-ը հաղթել էր նվազագույն հաշվով: Երկու խաղերի ընդհանուր 2:0 հաշվով Կոնֆերենցիաների լիգայի փլեյ-օֆֆ դուրս եկավ «Փյունիկ»-ը: Կոնֆերենցիաների լիգայի փլեյ-օֆֆի հանդիպումները կկայանան օգոստոսի 22-ին եւ 29-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ի՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում՝ 16.8 հա/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 9.5 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 26-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Տավուշ» ՁՕԸ-ի՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ/28,0 հա/, Այգեձոր/261,0 հա/, Արծվաբերդ /167,0 հա/, Չինարի /130,0 հա/, Չորաթան /82,0 հա/, Տավուշ /12,0 հա/, Տավուշ /12,0 հա/, Ներքին կարմիր աղբյուր /80,0 հա/, Վերին կարմիր աղբյուր /71,0 հա/ եւ Մովսես /15,0 հա/ գյուղերի վարչական տարածքներում գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով համապատասխանաբար՝ Այգեձորի ջրամբարից ինքնահոս ջրագծով՝ 140.6 լ/վ, Հախինջա գետից՝ Այգեձորի մայր ջրանցքով՝ 132.9 լ/վ, Տավուշ գետի անանուն վտակից՝ Արդամի ջրատարով՝ 5.2 լ/վ, Տավուշ գետից Բերդի ջրատարով՝ 11.9 լ/վ, Տավուշի ջրամբարից 71.5 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից-18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 26-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

● *Օգոստոսի 31-ին՝ ժամը 13:00-ին, Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կցուցադրվի «ՄուկՕպերա» օպերան: Տոմսերի արժեքը՝ 3000-6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հայրության ճանաչման պետական գրանցման համար:

(Տիգրան Շմավոնյան 32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրության ճանաչման պետական գրանցման համար երեխայի մոր եւ երեխայի նկատմամբ հայր ճանաչող անձի համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի մոր հղիության ընթացքում, ծննդի պետական գրանցման ժամանակ կամ դրանից հետո: «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով՝ նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա հայրության ճանաչման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել բացառապես երեխայի ծննդի պետական գրանցումից հետո շահագրգիռ անձի կողմից: Հայրության ճանաչման պետական գրանցման համար ներկայացվում են՝

1) համատեղ դիմումի դեպքում՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի եւ երեխայի մոր անձը հաստատող փաստաթղթերը,

2) երեխայի ծննդի գրանցման մասին վկայականը կամ ակտային գրանցման տվյալները, եթե հայրության ճանաչման գրանցումը կատարվում է երեխայի ծննդի պետական գրանցումից հետո,

3) երեխայի մոր հղիությունը հաստատող բժշկական տեղեկանքը, եթե հայրության ճանաչման մասին դիմումը ներկայացվում է մինչեւ երեխայի ծնվելը,

4) երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի անձը հաստատող փաստաթուղթը եւ երեխայի մոր բացակայության մասին իրավասու մարմնի տված փաստաթուղթը եւ երեխայի կենսաբանական հայր հանդիսանալու վերաբերյալ ԴՆԹ-ի որոշումը,

5) չափահաս անձի համաձայնությունը՝ իր նկատմամբ հայրություն ճանաչելու դեպքում,

6) տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե հայրության ճանաչման պետական գրանցման հետեւանքով նախատեսվում է փոխել նաեւ նրա անունը կամ ազգանունը,

7) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթը:

ՀՀ արդարադատության նախարարութուն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրության ճանաչման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Նարե Մարտիրոսյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սոֆիա Բաղրամյանը դարձավ Եվրոպայի մինչեւ 8 տարեկան աղջիկների արագ շախմատի առաջնության բրոնզե մեդալակիր: Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ կիսեց 2-3-րդ հորիզոնականները՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 3-րդ հորիզոնականը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+8 + 13 +19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +25 + 27
Գեղարքունիք	+ 8 + 12 +17 + 20
Լոռի	+11 + 14 +18 + 21
Տավուշ	+14 + 18 +20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +25 + 28
Արարատ	+18 + 20 +28 + 30
Արմավիր	+17 + 19 +28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +28 + 30
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+11 + 14 +18 + 21
ԼՂՀ	+12 + 16 +18 + 20
Երեւան	+18 + 20 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.8.2024**

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*